

<< ՍՊԻՏԱԿԻ Հ. 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ (2-րդ դասարան)

ԽՄԲԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ — << ԲՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ >>

ԾՐԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿ՝ Ս.ՊՈՂՈՍՅԱՆ

«ԲՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԱՄԼԵՐ» խմբակի ուսումնական ծրագիր

(64 ժամ, որից 4-ը` պահուստային)

Կենսաբանության ուսուցիչ` Ս. Պողոսյան

Հանրակրթական դպրոցում ուսուցման գլխավոր հարցերից մեկը բնագիտական առարկաները բոլոր աշակերտների համար հետաքրքիր եւ պահանջարկված դարձնելն է: Բնապահպանական հիմնախնդիրների ուղղությամբ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է օգտագործել բնության մասին գիտության լայն համալիր: Այս դասընթացը նպատակ է հետապնդում աշակերտների մեջ դաստիարակել էկոլոգիական գրագիտությամբ օժտված անձանց, ամբողջացնել սովորողների գիտելիքները մարդու եւ բնության փոխհարաբերությունների վերաբերյալ, նրանց մոտ ձեւավորել պատկերացումներ կենսաբանական ռեսուրսների, կենսաբազմազանության վրա ազդող գործոնների վերաբերյալ: Կարելոր խնդիր է սովորողների մոտ զարգացնել բնության կողմից մարդու գործունեության վնասակար հետեւանքները գնահատելու, կանխելու եւ վերացնելու համար անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտություններ, ինչպես նաեւ զարգացնել ՀՀ-ում բնապահպանական հիմնախնդիրների գնահատմանը եւ վտանգված էկոհամակարգերի վերականգնմանն ուղղված միջոցառումների պլանավորման եւ իրականացման հմտություններ, նպաստել բնապահպանական հիմնախնդիրները գիտակցող, պատասխանատու քաղաքացու ձեւավորմանը: Որպես խմբակի դասընթացի վերջնարդյունք ակնկալվում է, որ սովորողները կկարողանան բնութագրել մարդու եւ բնության փոխադարձ կապը, կարծելորեն կենսաբանական հարստությունները, կգնահատեն կենսաբազմազանությանը սպառնացող վտանգները, մարդու ազդեցությունը էկոհամակարգերի կայունության վրա եւ կքննարկեն բնության կարևոր դերը: Կարելոր է, որ սովորողները կանխատեսեն անտառների հատման, բնակատեղերի ոչնչացման, ջրային եւ ցամաքային էկոհամակարգերի աղտոտման, թունաքիմիկատների անվերահսկելի օգտագործման հետեւանքները, առաջարկեն բնությանը սպառնացող վտանգների նվազեցման եւ բնության պահպանությանն ուղղված միջոցառումներ, կայուն զարգացում, էկոլոգիական հետք: Կենսաբազմազանության պահպանության գործում կարելորեն հատուկ պահպանվող տարածքների դերը` նշելով վտանգված տեսակները: ճանաչեն Հայաստանի եւ Միջազգային Կարմիր գրքերում ընդգրկված առավել հայտնի տեսակները եւ նպաստեն բնապահպանության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի, վարքագծի եւ արժեքային համակարգի զարգացմանը: Վերջնարդյունքի դերը նպատակ են հետապնդում սովորողների մոտ զարգացնել ոչ միայն մտապահելու և վերարտադրելու հմտություններ, այլև ձևավորել կարողություններ և հմտություններ ինչպես նաև արժեքային համակարգ:

Թեմա 1. Ինչ է մեզ շրջապատում (15 ժամ, որից 3ժ գործ.)

1	Կենդանի բնության հիմնական օրինաչափությունները
2	Բնության երևույթներ
3	Բնության կենդանի և անկենդան մարմիններ
4	Բույսեր, բույսերի օրգանները և դերը
5	Բույսերի նշանակությունը մարդու կյանքում
6	Այգիներում և բանջարանոցներում աճեցվող բույսեր
7	Պտուղներ, ինչպես են մարդիկ այն օգտագործում
8	Դեղաբույսեր, նշանակությունը
9	Ինչ նպատակով են օգտագործում բույսերը
10	Սենյակային բույսեր
11	Բույսերի ճիշտ խնամքը
12	Սենյակային բույսերի վերատնկումը (գործ)
13	Նկարագրել և պատկերել թո սիրելի բույսը (գործ)
14	Դիտարկումներ բնության մեջ (համեմատել տարբեր բույսերը)
15	Զորացնել բույսի տարբեր օրգաններ (հերբարիումներ. գործ)

Թեմա 2. Կենդանիներ (11 ժամ, որից 1ժ գործ.)

1	Քո շրջապատի կենդանիները, ինչ կենդանիներ գիտես
2	Կենդանիների խմբերը
3	Կենդանիների և բույսերի կապը (սնդառական շղթաներ)
4	Անտեսանելի կապերը բնության մեջ
5	Ընտանի կենդանիներ
6	Ինչ նպատակով են մարդիկ ընտանի կենդանիներ պահում
7	Մեղրատու մեղու, թթենու շերամ
8	Ընտանի կենդանիների խնամքը
9	Ջետաբրբիր է իմանալ (ամենա... կենդանիներ)
10	Պատկերել և նկարագրել թո սիրելի ընտանի կենդանիներին (գործ)
11	Բնաձայներ

Թեմա 3. Սնունդ, նշանակությունը (4 ժամ)

1	Էկոլոգիապես մաքուր (առողջ) սնունդ
2	Սննդամթերքների աղտոտում
3	Սննդային հավելումներ
4	Ռացիոնալ սննդակարգ

Թեմա 4. Առողջ ապրելակերպ (10 ժամ, որից 1ժ գործ.)

1	Առողջ ապրելակերպ հասկացություն
2	Սպորտով զբաղվելը առողջ ապրելակերպի գրավականն է
3	Օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպում
4	Կենսակերպ, աշխատանքի խաթարում
5	Առողջությունը թանկ է հարստությունից
6	Շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունը մարդու առողջության վրա
7	Հիվանդություններ առաջացնող նյութեր (քաղցկեղածին, մոլտածին)
8	Վարակիչ հիվանդություններ
9	Ինչպես խուսափել հիվանդանալուց
10	Խաղ — Փևտրում ենք առողջ մարդ (գործ)

Թեմա 5. Աղետներ, ռիսկի նվազեցում (15 ժամ, որից 3ժ գործ.)

1	Բնական աղետներ, վտանգը և վնասները
2	Վտանգավոր բնական երևույթների միջև եղած կապերը
3	Բնության երևույթները և հետևանքները
4	Ինչպես վարվել վտանգավոր իրավիճակներում (անհրաժեշտ է իմանալ)
5	Երկրաշարժեր (պաշտպանությունը)
6	Բնական հրդեհներ (պաշտպանությունը)
7	Կայծակ (պաշտպանությունը)
8	Սողանք (պաշտպանությունը)
9	Ձրիեղէն, սելավ (պաշտպանությունը)
10	Ուժեղ քամիներ (պաշտպանությունը)
11	Դպրոցականների անվտանգության ապահովում (վտանգների գնահատում)
12	Տարբեր իրավիճակներում անձանոթ մարդկանց հետ շփման ընթացքում ցուցաբերվող վարքագիծ
13	Խաղս` կատակ, բայց լուրջ է (գործ)
14	Խաղ (տարբեր իրավիճակներ. գործ)
15	Խաղ (տարբեր իրավիճակներ. գործ)

Թեմա 6. Երկիրը մեր ընդհանուր տունն է (5 ժամ)

1	Բնությունը միշտ իմ ու քո օգնության կարիքն ունի
2	Եղիր բնության բարեկամ
3	Բուժիր բնության <<փոքրիկ վերքերը>>
4	Շրջակա միջավայրի պահպանություն, դպրոցամերձ շրջակայքի կանաչապատում
5	Էքսկուրսիա բնության գրկում